



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 մայիսի 2011թ. թիվ 142-Ա

**ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼ ԵՎ ՈՒՌՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ**  
**ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 135 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. 2011թ. հուլիսի 31-ին նշանակել Լոռու մարզի Ղուրսալ և Ուռուտ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ղեկավարի և ավագանու ) հերթական ընտրություններ և համայնքների նորընտիր տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լիազորությունների ստանձնման ժամկետ սահմանել 2011թ. սեպտեմբերի 2-ը:

2. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Վ.Ասատրյանին՝

Որոշման մասին ծանուցել Ղուրսալ և Ուռուտ համայնքների ներկայիս և նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՔՈԶԱՐՅԱՆ

2011թ. մայիսի 27

ք.Վանաձոր